

նայն ոգի<sup>1</sup>, արհամարհեալ մերժեր յինքենէ անաւրենն Վարազվաղան: 5 Եւ մտեալ ի տուն մոխրանոցին զկրակն ասաց զոլ աստուած, եւ ուրացեալ յանքակ եւ ի միասնական սուրբ Երրորդութենէն՝ եղեւ դեղագործ մահու եւ մատռուակ կորստեան ոգւոց, անաւրինաւն Միհրներսեհի<sup>2</sup>, ամենայն տկարամիտ անձանց: 6 Որում այնուհետեւ եղեալ վարդապետ՝ ուսուցանէր փութապէս ի տուէ եւ ի գիշերի դառն իշխանն Միհրներսեհ զպիղծ<sup>3</sup> սեպուհն Սիւնեաց զՎարազվաղան, ասելով այսպէս, թէ «Յայեա՛ց մտաց աչաւքդ եւ տե՛ս թագաւորութիւն մի այսպիսի, որ ահաւոր է եւ ի վեր քան զամենայն թագաւորութիւնս, եւ սաստկութիւն առնելձիոյ եւ հրահանգի եւ կամ կագմութիւն զիսու, որ սարսեալ դողացուցանէ զամենայն տեսողս եւ զլսողս<sup>4</sup>, զինազանդս եւ զանհնազանդս. ընդ նմին եւ զաւրինացս յայտնապէս<sup>5</sup> ըստ արժանի մեծ թագաւորութեանս զընտրողութիւն, զստոյզն եւ զվայելուչն: 7 Զանգի ո՛վ որ ոչ տեսանէ յամենայն տիեզերս զարեգականն զփառաւորութիւնն, որոյ ճառագայթիւք լուսաւորին ամենայն եղեալք խաւսնոց<sup>6</sup> եւ անասնոց. եւ կամ զիրոյ աւգտակարութիւն, որով կերակրին եւ վայելեն ամենայն բանաւորքս. եւ կամ տարերքս եւ քաղցրախառն աւղոց շնչմունք, որով բոյսք եւ սերմունք ատոբացեալք եւ հասեալք ի կատարելութիւն՝ մատուցանեն մարդկան զկեալն բարի եւ զուրախանալն: 8 Արդ՝ թեպէտ եւ անհնազանդ են մեզ այնոքիկ, տեսանեն զայս ամենայն եւ ոչ իմանան, վասն զի ոչ ունին իբրեւ զմեզ մեծ իմաստս եւ խոհականութեան խրատս: 9 Եւ վասն զի չկարացեալ ճանաչել այնպիսեացն<sup>7</sup> զաստուածս եւ ոչ զաւգուտսն<sup>8</sup>, որ յուրաքանչիւր ումեքէ յաստուածոցն բաշխին ի մարդիկ՝ յայտնի է եւ ստուգապէս, թէ եւ աստուածոցն ցասուցեալ՝ չկամեցան զհլրեանց բարութիւնսն, որ ի միոյ միոյ որոշողութեամբ պարգեւի յաշխարհս՝ ծանուցանել անմտացն: 10 Իսկ որք ընդ մերով մեծ իշխանութեամբս հնազանդեալ են ազգք եւ ընդ ձեռամբ այսպիսի ահեղ եւ սաստիկ կարգեալք են ընդ թագաւորութեամբ՝ կորնչին զյաւիտենական կորուստն, եւ մեք մեղադրեալք յաստուածոց՝ պատուհասիցիմք»:

1 SS. զամենայն ոգի

2 Ձ. ոգւոյց անօրինաւն միհրներսեհի

3 Ձ. պեղծ

4 SS. լսողս

5 Ձ. յայտնապէսս

6 ԲԳտ. եւ անխօսնոց

7 ՁԱտ. այսպիսեացն

8 SS. զօգուտն

9 SS. յաստուծոյ